

3.- 1903 թ.՝ «Ռոկի Աքաղաղ», թ.
տպագրութիւն:

4.- 1904 թ.՝ «Կայծը», Ա. հատոր,
Գ. տպագրութիւն:

5.- 1904 թ.՝ «Կայծեր», թ. հատոր
Եւ վերջ, թ. տպագրութիւն:

6.- 1905 թ.՝ «Խաչակողի յիշատա-
կարանը», Ա., թ., Գ. Եւ Դ. մասն, Գ.
տպագրութիւն:

7.- 1905 թ.՝ (Խճնթը և Զալալէդ-
դին), Գ. տպագրութիւն:

8.- 1905 թ.՝ «Զալալէդդին», Գ.
տպագրութիւն:

9.- 1906 թ.՝ «Խամսայի Մելիքու-
թիւնները», «Ղարաբաղի Ասողագէտը»,
«Դաղսնիքն Ղարաբաղի» — առաջինը Գ.
տպագրութիւն, Երկրորդը՝ թ. տպա-
գրութիւն, երրորդը՝ արտատպութիւն
«Արձագանք»-ից, մի հատորի մէջ:

10.- 1911 թ.՝ «Սալրի», Ա. հատոր,
Ճեռագիր:

11.- 1912 թ.՝ «Պարսկական պատկեր-
ներ» (նոր շարադասութեամբ, Ճեռա-
գիր Եւ արտատպութիւն):

12.- 1913 թ.՝ «Տաճկահայք» (նոր
շարադասութեամբ, Ճեռագիր Եւ արտ-
ավուրիւն), թ. տպագրութիւն:

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՍԵՆԱԴԱՐԱՆ

Հ. թ. Ը. Միութեան Նուպարեան
Մատենադարանը հետօնետէ կը նոյսա-
նայ հատորներով Եւ մեր ժամանակա-
կից պատմութեան համար կարեւոր Եր-
շանակութիւն ումեցող վաւերագիրնե-
րով: 1935-ին տրամադրած 481 կտո-
րի տեղ, 1936-ի մուտքե եղած է 2927
կտոր, հետեւեալ կերպով բաժնեած: —
1923 զանազան հատորներ, 73 հաւաքա-
ծոյ լրագիրներու Եւ պարերականնե-
րու, 63 պատկեր, լուսանկար, ֆարո,
հայ երաժշտական նորագրութիւն, Եւ
այլն, 6 հին գրչագիր Եւ 1688 նամակ,
Ճեռագիր Եւ իմբնագիր աշխատութիւն:
Ասոնց մեծ մասը ներ տրած է, որիշ-
ներ գնաւած են Եւ ուսանել ալ փոխանակ-
ւած կրկնակներու հետ:

Ամենէն կարեւոր նւիրատութիւն-
ները բրած են Երեւան (148 հատոր),
Տ. Պ. Էսմէրեան (79 հատոր) Եւ 2 հին
գրչագիր, Տ. Լ. Բաշալեան (66 հա-
տոր), Հ. թ. Ը. Միութեան կեդր.
Վարչութիւնը (48 հատոր), Գ. Սիմազ-

եանի Ժառանգութենէն 135 հատոր
պարսկերէն Եւ արաբերէն: Նւիրատու-
ներէն չորսը օտարականներ են՝ Մ. Քը-
րափք - Պոնար, Մոսքայի Վոքսը, Մ.
Պալըրուշայքիս Եւ Մ. Հ. Լըռուա:

Մատենադարանին վարչութիւնը ան-
դուլ չամէ ի զործ կը դնէ աւելցնելու
համար հայ ժամանակակից պատմու-
թեան վերաբերեալ վաւերագիրներու
հաւաքածոն, որ հիմակուց արդէն մեծ
արժէք մը կը ներկայացնէ Եւ զմահա-
տելի աղբիւր մըն է պատմութեան հա-
մար: Նորստաց գրութեանց մէջ յիշենք
1348 պատմական վաւերաբուղը, հան-
գուցեալ Յովհաննես փաշա Գույում-
նեանի իմբնագիր Յիշատակները, 324
նամակ զանազան անձերէ՝ Տ. Վ. Մա-
լէզեանի կազմէ յանձնեած, 4 վաւերա-
բուղը Տ. Լ. Կերտամէ, եւն:

1936-ին Հ. թ. Ը. Միութեան կող-
մէ Նուպարեան Մատենադարանին հա-
մար ծախսւած գումարն է 679 անգլ.
ուսկի: